ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը համեմատության և հակադրության մեթոդով

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Սյուզաննա Մելոյան

Դպրոց՝ Վարդենիկի կրթահամալիր

Մարտունի **2022**թ.

Բովանդակություն

*1.*Ներածություն ……*3 2.*

Գրական ակնարկ.……*7 3.*

Փորձարարական հետազոտություն.……*12*

3.1-Խմբի նկարագիրը.……*12*

3.2-Փորձարարական դասեր……*13*

3.2.1-Փորձարարական դաս-*1*.……*13*

3.2.2-Փորձարարական դաս-*2*……*15*

4. Եզրակացություն……*16*

5. Գրականության ցանկ……*17*

6. Հավելված……*18*

Դասապլան-*1*……*18*

Դասապլան-*2*……*26*

1.Ներածություն

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն1(տե՛ս Ն. Զեյնալյան, <<Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները>>, էջ 46,https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է դպրոցի, դասավանդվող առարկաների և ուսուցչի դերը:

Երեխայի դաստիարակության առաջնային խնդիրներից է համապատասխան արժեքային համակարգի ձևավորումը, որն անհնարին է հիմնավորել առանց նշված համակարգի հստակեցման: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի

ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ2(տե՛ս Ա. Գևորգյան, <<Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում>>, Եր., 2002, էջ 65): Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց լեզու և գրականություն առարկաների դասընթացների ժամանակ: Գրականության յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության

բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Արժեքային համակարգը նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- ունենա ազգային ինքնագիտակցություն,

● կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

● ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

● գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային լեզվի դերը, ● գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,

● գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:

● Սովորողների մեջ այս և նմանատիպ այլ բարձր արժեքների ձևավորման գործում, իր բացառիկ դերն ունի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի դասավանդումը:Հայ գրողների և բանաստեղծների յուրաքանչյուր ստեղծագործություն համադրությունների և հակադրությունների մի ամբողջ շղթա է, որը հնարավորություն է տալիս գրական կերպարների վերլուծությամբ մեկը մյուսին հակադրելով ու համադրելով ձևավորելսովորողների արժեքային համակարգը:

Հանրակրթության պետական չափորոշչով «Հայոց լեզու, գրականություն» ուսումնական բնագավառի ուսուցումը նպատակաուղղված է.

● մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով, սեփական մտքերը, հույզերն արտահայտելուն, մարդկանց հետ հաղորդակցվելուն, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալուն, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալուն,

● հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը,

● սովորողների կողմից լեզուն որպես մշակութային արժեքի ընկալմանը, այն

կրելու, պահպանելու ու տարածելու անհրաժեշտության, հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերի, գրական ստեղծագործություններին, արվեստի գործերին ծանոթանալու և հաղորդակցվելու անհրաժեշտության գիտակցմանը,

● գեղագիտական ճաշակի ձևավորմանը, Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների և համաշխարհային

գրական մշակույթի արժեքների գնահատմանը:

●

Հայոց լեզվի, գրականության ուսուցման խնդիրներն են .

● խոսքային ինքնարտահայտման հմտությունների զարգացման միջոցով սովորողի մտքի և գործունեության ազատության զարգացում,

● ուսումնական ընդհանուր կարողությունների և հմտությունների զարգացում, ● ինքնուրույն գործունեության (ընտրություն, սեփական ընտրության և արարքի համար պատասխանատվություն, սեփական կյանքի բարելավում, սեփական ուսումնական հետագծի որոշում և խմբագրում) հմտությունների զարգացում, ● ինքնուրույն սովորելու հմտությունների զարգացում,

● ընթերցելու, լսելու կարողությունների զարգացում,

● գրական-գեղարվեստական ճաշակի ձևավորմանը նպաստում,

● հայալեզու ուսումնական, հրապարախոսական, գիտա-հանրամատչելի նյութերի ստեղծում և դրանց տարածում համացանցով (գրավոր և բանավոր). ● ավագ դպրոցի շրջանավարտի՝ հայոց լեզվի, գրականության պետական ավարտական քննությանը նախապատրաստում:

2. Գրական ակնարկ

Պատահական հանդիպումը լավ գրքի հետ կարող է ընդմիշտ փոխել մարդու ճակատագիրը /Մարսել Պրևո/**:**

Հայոց լեզվի և գրականության ուսուցչի գործունեությունն առաջնայնորեն առնչվում է հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի և գրականության դասավանդման, հայոց լեզվի հանդեպ սիրո և հարգանքի դաստիարակման, ազգային ավանդույթները հայոց լեզվով ու գրականությամբ ուսուցանելու, պետական լեզուն որպես ազգային արժեք ճանաչել տալու խնդիրներին: Հայոց լեզու և գրականություն առարկան սովորողների մեջ դաստիարակում է քաղաքացիություն և հայրենասիրություն, սեր՝ հայրենի հանդեպ, հարգանք՝ գրական-գեղարվեստական, նաև անցյալում ստեղծված հայ և համաշխարհային մշակութային արժեքների հանդեպ, գրական ստեղծագործությունները գնահատելու և սեփական տեսակետը հիմնավորելու,

անձնական դիրքորոշումը արտահայտելու կարողություն, հաղորդակցական տարբեր ոլորտների և գործունեության տեր մարդկանց հետ ազատորեն շփվելու, դիմացինին հասկանալու և շրջապատի կողմից հասկացված լինելու, շարունակ ինքնակատարելագործվելու կարողություններ, զարգացնում է լեզվամտածողությունը,

անսխալ տիրապետում է խոսքային գործունեության բոլոր տեսակներին: Հայոց լեզվի և գրականության շնորհիվ սովորողը ընդլայնում է իր մտահորիզոնն ու աշխարհայացքը, տիրապետում է այլ լեզուների: Իր լեզվի շնորհիվ է ձեռք բերում ազգային արժանապատվության խոր զգացում, հպարտություն՝ իր ինքնության համար և անսխալ հայերենով հաղորդակցվելու բարձր գիտակցություն և պատասխանատվություն3(տե՛ս Մարդ և Հասարակություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր №3(65)2016, էջ 14): Գրականության դպրոցական ծրագրում ընդգրկված են նյութեր,որոնց ուսուցումը բուն գրական գիտելիքներից բացի պայմանավորում է դպրոցականի արժեքային համակարգի, բարոյական կերպարի, մասնավորաբար հոգևոր ընկալկումների ձևավորում և զարգացում:Սակայն խնդրի լուծումը հնարավոր չէ իրականացնել

սովորական դասի հայտնի ցուցիչներով ՝ ընթերցել,անգիր ասել,վերլուծել,ուստի ենթադրում է ուսուցման կազմակերպման այլ մոտեցումներ: Ցանկացած նյութի

ուսուցում արդյունավետ է,եթե ճիշտ են սահմանվում նպատակներն ու խնդիրները: Իմ նպատակն է աշակերտների մեջ սերմանել և դաստիարակել ամենավեհ և մեծագույն արժեքներից մեկը՝ հայրենասիրությունը և հայրենիքի պաշտպանությունը, քանզի, իմ կարծիքով, այժմ այն ամենահրատապ խնդիրներից մեկն է, հատկապես վերջին <<44օրյա պատերազմ>>-ից հետո: Յուրաքանչյուր երեխայի մեջ պետք է դաստիարակել հայրենիքի պաշտպանության գործը դեռ օրորոցից: Ցավալի է, բայց պատերազմից հետո շա~տ-շա~տ հայ ընտանիքներ հեռացան հայրենիքից՝ օտարելով իրենց երեխաներին հայրենի երկրից և <<ՀԱՅ>> մեծագույն կոչումից: Ցանկացած հայի աչքերում կան փորձության պատկերներ, որոնցով անցել է նա, ու ամեն անգամ դրանք հիշելիս՝ նրա աչքերը կրկին արցունքով են լցվում: Երևի չի եղել այնպիսի ժամանակաշրջան Հայաստանի համար, երբ նա ապրել է հանգիստ և խաղաղ: Ուրեմն՝ յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որ Հայաստանը մենք ենք՝ ես ու դու, մեզնով է մեր հայրենիքը կանգուն, մենք ենք նրա ապագան, ուրեմն պետք է լինենք միասնական՝ աշխարհի տարբեր անկյուններում գտնվելով հանդերձ, պետք է ուս ուսի տված պայքարենք մեր հայրենիքի համար: Աշակերտների մեջ այս գաղափարը սերմանելու համար ես իմ փորձարարական դասերի համար ընտրել եմ Ռաֆֆու <<Սամվել>> պատմավեպի համանուն հերոսին, որը ազային նկարագիր ունեցող հայրենասեր գործիչ է, ով պետական մտածողությունը գերադասել է արյունակցական կապից: Առ այսօր Սամվելը մնացել է հայրենասիրության բարձրագույն տիպարը, սովորեցնում է, թե ինչպես պետք է սիրել հայրենիքը և պաշտպանել պետությունը: Ցանկացած օր յուրաքանչյուր ուսուցիչ իր դասը սկսելուց առաջ ունի մտավախություն. ինչպես և՛ հետաքրքիր, և՛ տպավորիչ սկսել դասը: Դասի տպավորիչ մուտքից է կախված հետագա ուսուցման հաջողությունը: Այդ նպատակից ելնելով էլ հայ գրականության հերթական դասը որոշեցի անցկացնել «Համեմատության և հակադրության» մեթոդով: Համեմատական մեթոդը բաղկացած է ուսումնասիրությունների այլ օբյեկտների հետ

ամբողջությամբ կամ մասամբ զուգահեռներ հաստատելուց, նմանությունների և տարբերությունների վերլուծությունից:

Ի՞նչ է համեմատելը: Համեմատելը նշանակում է ուշադրություն դարձնել երկու կամ ավելի օբյեկտների՝ նրանց հարաբերությունները բացահայտելու կամ դրանց տարբերություններն ու նմանությունները հաշվի առնելու համար: Համեմատության գործընթացում, նմանությունների բացահայտումը թույլ է տալիս կազմակերպել և կապել նոր հայեցակարգը առկա գիտելիքների հետ, իսկ տարբերությունների հաստատումը կամ դրանց հակադրումը թույլ է տալիս տարբերակել նոր հասկացությունը այլ նմանատիպերից՝ խուսափելով շփոթությունից կամ աղտոտումից:

Համեմատել կարողանալը պայման է այն հարաբերությունների հաստատման համար, որոնք տանում են դեպի վերացական մտածողություն: Համեմատությունը կազմված է լեզվի ներսում, ինչն էլ հնարավոր է դարձնում համեմատությունը:

Տարբերությունն այն որակն է կամ պատահականությունը, որով մի բան տարբերվում է մյուսից, կամ նույն տեսակի իրերի բազմազանությունը: Համարժեքությունը երկու կամ ավելի իրերի կամ մարդկանց արժեքի, գնահատման, ուժի կամ արդյունավետության հավասարությունն է: Հավասարությունը որևէ այլ բանի համապատասխանությունն է իր բնույթով, ձևով, որակով կամ քանակով, կամ համապատասխանությունն ու համամասնությունը, որը բխում է մի ամբողջություն միատեսակ կազմող բազմաթիվ մասերից:

Հաստատել զուգահեռներ ուսումնասիրության այլ օբյեկտների հետ ձեռք բերել և բացահայտել կոնկրետ տվյալներ՝ ուսումնասիրության օբյեկտն ավելի լավ հասկանալու համար:

Այն նաև օգնում է մեզ հասկանալ առարկաների և գործընթացների կազմը կամ վարքը, և կարող է օգնել մեզ հասկանալ որոշակի գործընթացների արձագանքը նմանությամբ: Համեմատել օգնում է մեզ համատեքստավորել հասկանալու համար, թե առարկան ինչ է նպաստում շրջակա միջավայրին և խմբին: Ուրիշների հետ նմանությունների և

տարբերությունների միջոցով մենք կհասկանանք, թե որտեղ ենք այն տեղադրում: Գաղափարների ստեղծման համար համեմատությունը շատ օգտակար է:

Համեմատությունը օգնում է մեզ իմանալ հնարավոր փոխարինողների մասին:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ ՝ ՔԱՅԼ ՔԱՅԼՈՎ

1.Սահմանել՝ ինչ պատճառով և ինչ նպատակով ենք ցանկանում ուսումնասիրության առարկայի համեմատություններ անել այլ առարկաների հետ:

2.Ուսումնասիրության թեմայի սահմանումից առանձնացրեք այլ թեմաներ, որոնք կարելի է համեմատել, ավելի մոտ կամ ավելի հեռու են:

3.Թեմայի շրջանակներում առանձնացրեք տարրեր, որոնք կարող են համեմատվել մյուսների հետ, և տարբեր տարրերի այլ տարրերի նույնականացում, ավելի մոտ են կամ ավելի հեռու, որոնց հետ կարելի է համեմատել, համեմատություններ են հավասար կամ նման, կամ շատ տարբեր:

4.Բացահայտեք բառարանը կամ բառարանը ստեղծված բառաբանական մեթոդով, ինչ հնարավոր համեմատություններ կարող է առաջացնել:

5.Բացահայտեք դասակարգման չափանիշներում դասակարգման մեթոդով սահմանվում է, թե ինչ հնարավոր համեմատություններ կարող է դա առաջացնել:

6.Յուրաքանչյուր համեմատության համար որոշեք ինչպիսի՞ համեմատություններ կան: Փնտրեք նմանություններ, փնտրեք տարբերություններ կամ երկուսն էլ:

7.Յուրաքանչյուր համեմատության համար ՝ սահմանել չափանիշներ, պարամետրեր, ըստ որի համեմատությունը կկատարվի:

8.Պարամետրերը սահմանելուց հետո, համեմատվող տարրերից յուրաքանչյուրի համար, հավաքել տեղեկատվությունը պարամետրերի վերաբերյալ. 9.Եվ, վերջապես, հակադրել տեղեկատվությունը տարբեր տարրերի պարամետրերի նկատմամբ և ձևակերպել եզրակացությունները:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համեմատական մեթոդների տեսակները կարելի է ամփոփել փիլիսոփա Ջոն Ստյուարտ Միլի հինգ ինդուկտիվ մեթոդներից առաջին երկուսի միջոցով՝ համաձայնության մեթոդը, որը բաղկացած է համընկնող բնութագրերի վրա կենտրոնացած ուսումնասիրությունից և տարբերության մեթոդից, որը բաղկացած է ուսումնասիրությունից կենտրոնացած է տարբերվող հատկանիշների վրա:

Համաձայնության և տարբերության այս տարբերակմանը զուգահեռ, հնարավոր է նաև տարբերակել այսպես կոչված ամենանման համակարգերի դիզայնը, որը բաղկացած է հնարավորինս միմյանց նման դեպքերի համեմատությունից և ամենատարբեր համակարգերի նախագծումից: համակարգեր, որը բաղկացած է դեպքերը հնարավորինս համեմատելով միմյանցից տարբեր.

Համապատասխանության մեթոդի, տարբերության մեթոդի, ամենանման համակարգերի նախագծման և ամենատարբեր համակարգերի նախագծման համադրությունը հանգեցնում է համեմատական մեթոդների չորս հիմնական տեսակների.

Ուսումնասիրեք նմանությունները նման դեպքերում:
Ուսումնասիրեք նմանությունները տարբեր դեպքերում:
Ուսումնասիրեք նման դեպքերի տարբերությունները:
Ուսումնասիրեք տարբեր դեպքերի տարբերությունները միմյանցից:(metodologiasapiens.com https://metodologiasapiens.com/hy/metodos/metodo comparativo/):

Պարզվել է, որ համեմատությունն ու հակադրությունը բարելավում են թեմաների ընկալումը մեկից ավելի գնահատականի համարժեքով: Այս մեթոդն օգնում է սովորողներին պարզաբանելու հաճախ շփոթվող կամ դժվար ըմբռնելի հասկացությունները:

Այս մեթոդը կիրառվում է այլ մեթոդների հետ համադրությամբ, այն տարբերությամբ, որ աշակերտներին առավել հստակ դերեր են տրվում:

3. Փորձարարական հետազոտություն

Ի տարբերություն այն դասերի, որոնց այցելում են ստուգման կամ մանկավարժի աշխատանքում նոր փորձի տարրեր փնտրելու նպատակով՝ փորձարարական դասերը ուսուցիչներին առաջարկում են նոր մեթոդիկա: Համապատասխանաբար ուսումնական պրոցեսի մյուս կողմերը չեն դառնում ուսումնասիրման առարկա: Դիտարկվող դասը որոշակի է դարձնում նորի և պրակտիկայում լայն կիրառում գտած ուսուցման միջոցների համապատասխանելիությունը, նրանց գործառութային փոփոխությունները ներմուծվող նորի հետ համապատասխանեցված: ՈՒսումնասիրվում է ներկայացվող նորույթի առաջընթացի հնարավորությունը ուսուցման ժամանակի և ուժի նվազագույն կորստի նպատակով, նրա արդյունավետությունը կայանում է սովորողների կարողությունների, հմտությունների և գիտելիքների համակարգի զարգացման վրա դրական ազդեցությամբ:

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիրի 10-րդ դասարանում:Քանի որ դասի թեման բավականին ընդգրկուն էր, դասապրոցեսը ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու համար, ես ընտրեցի «Համեմատության և հակադրության» մեթոդը: Այս դասարանում սովորում են 15 աշակերտ՝ 9 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:Գրականություն առարկան անցնում են շաբաթական 2 դասաժամ՝ այն դասացուցակում տեղադրված է 1-ին կամ 4-րդ ժամերին:Առարկան

ուսումնասիրում են երեքշաբթի և ուրբաթ օրերին, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին պատրաստվել, մտորել և հասնել եզրահանգումների:Ես իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ այս դասարանում բոլոր աշակերտների հետ:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

- վերլուծել թեմայի իրադարձությունները
- կատարել համադրություններ և հակադրություններ
- աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-***1***

Այսօրվա դասը՝ «Ռաֆֆու <<Սամվել>> պատմավեպի գրության շարժառիթները, պատմական ժամանակաշրջանը, սյուժեն>> թեման է (տե՛ս դասապլան 1, էջ՝ 18):

Աշակերտներին նախապես հանձնարարվել էր կարդալ Ռաֆֆու <<Սամվել>> պատմավեպը, իսկ Հայ գրականության դասագրքից ծանոթանալ պատմավեպի գրության շարժառիթներին, պատմական ժամանակաշրջանին: Նյութի բովանդակությունն սովորողներին հասցնելու , նրանց գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերմանն ապահովելու, դասն արդյունավետ վարելու համար ուսուցման գործընթացում կիրառվելու են հետևյալ դիդակտիկ նյութերը՝ մարկերներ, մատիտներ, A3

թղթեր, կպչուն թղթեր և այլն: Դասաժամն սկսվեց ներկա-բացակա անելով,այնուհետև ներկայացվեց դասի թեման և նպատակները : Հատուկ քարտերի միջոցով, որոնց վրա գրված էին <<Սամվել>> պատմավեպի՝ թևավոր խոսք դարձած նախադասությունները, դասարանը բաժանում է 3 խմբի, տալիս է յուրաքանչյուր խմբի բավականին ծավալուն աղյուսակ:Այնուհետև ուղղորդող հարցերի միջոցով բացատրում է աշակերտների հետագա անելիքները՝ այն է՝գրել աղյուսակում գրված բառերի և հասկացությունների նմանությունները ու տարբերությունները: Այնուհետև

գրատախտակին գրում է 2

հասկացություն և խնդրում, որ կազմեն այդ հասկացությունների էական նմանությունների և տարբերությունների ցանկը: Հայտնում է, որ այս աշխատանքը պետք է կատարեն 15-20 րոպեների ընթացքում, քանի որ նյութը բավականին ծանոթ է: Սակայն աշխատանքը պետք է ներկայացնեն <<դերային քարտերի>> միջոցով: Բացատրում է դերային քարտերի նշանակությունը և բաժանում դրանք:

Ըստ այդ դերային քարտերի՝ յուրաքանչյուր խմբի Ա1, Ա2, Ա3 աշակերտները ստանձնում են խմբի ուսուցչի դերը, ովքեր ուսումնասիրում են հանձնարարված նյութը և այն բացատրում իրենց խմբի անդամներին, Բ1, Բ2, Բ3 աշակերտները՝ առաջնորդ, ովքեր ժողովրդավարական սկզբունքով կառավարում և առաջնորդում են իրենց խմբերին՝հավաստիանալով, որ տրված ժամանակահատվածում իրենց խմբերը

ավարտին են հասցնում բոլոր առաջադրանքները, Գ1, Գ2, Գ3 աշակերտները՝ հարցատու, ովքեր նյութի հետ կապված մարտահրավեր պարունակող հարցեր են տալիս խմբի անդամներին, խմբի ուշադրությունը կարևոր կետերի վրա են հրավիրում, Դ1, Դ2, Դ3 աշակերտները՝ գրառող, ովքեր ամփոփում են խմբի հիմնական եզրահանգումները և ստուգում, որ խմբում բոլորը համաձայն են դրանց, իսկ հետո գրի առնում հնչած մտքերը, քանի որ նա նաև պետք է կարողանա դրանք ներկայացնի մյուս խմբերին, Ե1, Ե2, Ե3 աշակերտները՝ ստուգող, ովքեր ստուգում են համոզվելու համար, որ խմբի բոլոր անդամները հասկանում են խմբի ուսուցչի բացատրությունները, աշխատելիս անում են ճիշտ եզրահանգումներ:

Ուշիուշով հետևելով ուսուցչի հրահանգներին՝ դերային քարտերը ստանալուց հետո յուրաքանչյուր խումբ սկսում է իր խմբային աշխատանք: Խմբի յուրաքանչյուր անդամ կատարում է իրեն հանձնարարված աշխատանքը՝ միաժամանակ համագործակցելով խմբի մնացած անդամների հետ: Աշակերտներին ուղղորդելու համար հայտնում է, որ խմբի յուրաքանչյուր անդամի կարող է հարցեր տրվել նյութի վերաբերյալ և նրանց ուշադրությունը կենտրոնացնելու համար հնչեցնում է հարցերը.

Ի՞նչ է ընտանիքը՝ ըստ Ռաֆֆու:

Ի՞նչ եք հասկանում հայրենասիրություն ասելով:

Ի՞նչ եք հասկանում դավաճանություն ասելով:

Ի՞նչը կարող է դավաճանություն համարվել:

Ժամանակի ավարտից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ վերոհիշյալ <<դերային քարտերի>> միջոցով :Այնուհետև յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր աշակերտ պատասխանում է ուսուցչի հնչեցրած հարցերին: Խմբերի աշխատանքները համեմատում, այնուհետև հակադրում միմյանց:

Բավականին տպավորիչ և հետաքրքիր դաս ստացվեց:Ուսուցիչը լսում է յուրաքանչյուր խմբի գրառածը և ընդհանրացնում դրանք:Գնահատում է բոլորին կատարված աշխատանքների համար: Ամփոփում է դասը աշակերտների օգնությամբ, հարցնում, թե

ինչ նոր բան սովորեցին: Բաժանում է թերթիկներ, որոնց վրա աշակերտները գրում են, թե ինչն իրենց համար անհասկանալի մնաց, ինչ թերըմբռնուներ կան:Աշակերտներն նշում և հետ են տալիս:Տալիս է տնային հանձնարարություն՝ <<Սամվել պատմավեպի կերպարները, Սամվելի կերպարը>>:

3.2.2-Փորձարարական դաս

Դասը սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութին վերաբերող հարցերին: Էլի նույն մոտեցմամբ և նույն մեթոդով անցկացվեց երկրորդ փորձարարական դասը՝ դասարանը բաժանվեց երեք խմբերի, տրվեց աղյուսակներ և հասկացություններ, որոնք բաժանված դերային քարտերի միջոցով ներկայացվեցին, իհարկե, ավելի դյուրին կերպով՝ տարբերվում էր միայն թեման: Սամվելի կերպարը համեմատեցին և հակադրեցին մի շարք կերպարների հետ՝ Սամվել-Աշխեն, Սամվել

Վահան Մամիկոնյան, Սամվել- Տաճատուհի և այլն: Վեր հանվեց Սամվելի կերպարի այն վեհ հատկանիշները, որոնք պետք է ընկալի ու աժեվորի յուրաքանչյուր աշակերտ:
Որպես տնային աշխատանք հանձնարարվեց <<Սամվելի կատարած քայլը իմ աչքերով>> վերնագրով շարադրություն: Ամփոփվեց ևս մեկ դաս: Աշակերտները արտահայտեցին իրենց մտքերը և եզրահանգումներ կատարեցին: Ամփոփելով երկրորդ փորձարարական դասը՝ կարելի է նշել,որ այն հաջողված էր: Աշակերտները կարողացան արտահայտել իրենց դիրքորոշումները թեմայի շուրջ: Հայրենասիրական ոգին բարձր էր, բոլորը կողմնակից էին Սամվելի կատարած քայլին: Դասի հիմնական հիմնական նպատակները իրականացվեցին, աշակերտները գոհ էին և հագեցած:

4.Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր ընթացք ունեցավ, դասը շատ տարողունկ էր և հագեցած: Այն հիմնականում անցկացվց խմբային աշխատանքով: Դասպրոցեսը բավականին ակտիվ անցավ. բոլորը մասնակցեցին դասապրոցեսին, կարողացանք հասնել դասի նպատակներից բխող վերջնարդյունքներին: Աշակերտները խոստովանեցին, որ ընտրված մեթոդը իրենց շատ դուր եկավ և օգնեց ինքնուրույն մտածելու, վերլուծելու ինքնարտահայտվելու գործում, ինչպես նաև հայրենասիրությամբ ներշնչվելու գործում: ՈՒսուցիչը լուծում է իր առջև դրված խնդիրը՝ ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները: Դասի ընթացքում կիրառվեցին նաև

հարցադրումների և մտագրոհ մեթոդները, սակայն վերջնարդյունքի հասանք համեմատության և հակադրության մեթոդով:

5. Գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,
2.Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986
3.Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:- Եր., 2006
4. Մարդ և Հասարակություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր №3(65)2016 5. Ն. Ջեյնալյան, Անձի արժեհամակարգի ձեվավորման աշխարհայացքային նախադրյալները, էջ 46,https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf

6.https://metodologiasapiens.com/hy/metodos/metodo-comparativo/):

6. Հավելված

Դասապլան-**1**

ՈՒսուցիչ՝ Սյուզաննա Մելոյան

Առարկա	Հայ գրականություն	Ամսաթիվ	10.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	X
Թեմա՝	Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի գրության շարժառիթը, պատմական ժամանակաշրջանը,սյուժեն						

Օգտագործ վող նյութեր՝	10-րդ դասարանի հայ գրականության դասագիրք, պատմավեպի բնագիրը, մարկերներ, մատիտներ,գրիչներ, կպչուն թղթեր,A3 թղթեր
Դասի նպատակը՝	● տարբերակել պատմավեպը վեպից ● ծանոթացնել <<Սամվել>> պատմավեպի գրության շարժառիթներին, պատկերվող դարաշրջանին ● գաղափար տալ պատմական հիմքի մասին ● նպաստել սովորողների արժեհամակարգի ձևավորմանը պատմական կերպարների միջոցով
Վերջնարդյունքն երը՝	Աշակերտը կկարողանա՝ ● տարբերակել պատմավեպը վեպից ● ներկայացնել պատմավեպի գրության շարժառիթները, պատկերվող դարաշրգանը ● գիտակցել հայ գրականության՝որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ

Մուտք- 2րոպե Սկիզբ- 3րոպե	Ծանոթանում են դասի թեմային և նպատակներին	Ողջույն Ներկա-բացակա Ներկայացնում է դասի թեման և նպատակները	

Ընթացք- 30-35 րոպե	\Հատուկ քարտերի միջոցով բաժանվում են 3 խմբի	Դասարանը նախապես եղած քարտերով բաժանում է 3խմբի և տալիս հետևյալ աղյուսակը. Նմանություններ Պատմավեպի և վեպի համեմատություն Երկուսն էլ՝ 19-րդ դարավերջի և 4-րդ դարի համեմատություն Երկուսն էլ՝ 19-րդ դարավերջ	Ըմբռնում եք՝ի՞նչ պետք է անեք:

	Պատմավեպը… Վեպը…
	Սակայն Սակայն Պատմավեպը… Վեպը…
	19-րդ դարավերջը… 4-րդ դարը…
	Սակայն Սակայն 19-րդ դարավերջը… 4-րդ դարը…
	19-րդ դարավերջը… Ներկա

ի և ներկա ժամանակն երի համեմատությունը Հայերի և պարսիկներ ի համեմատությունը	Երկուսն էլ՝
	Տարբերություններ

Ինչպիսի՞ ժանրային հատկություններ ունի պատմավեպը: Ինչպե՞ս կբնութագրեք վեպի ժանրը: Ինչո՞վ էր 19-րդ դարավերջը նման 4-րդ դարին: Արդյո՞ք նմանություն կա 19- րդ դարավերջի և ներկա ժամանակների միջև	20		Աշխատում են ուսուցչի ուղղորդմամբ Արտագրում են այդ հասկացություններ ը իրեն տետրերում Յուրաքանչյուր խումբ ուշիուշով հետևում է ուսուցչի հրահանգներին

աշխատանքը պետք է կատարեն 15-20

	Ժամանակն երը… Սակայն Սակայն … 19-րդ դարավերջը… Ներկա ժամանակն երը… Հայերը… Պարսիկները… Սակայն Սակայն Հայերը… Պարսիկները…

Տալիս է ուղղորդող հարցեր

Գրատախտակին գրում է 2 հասկացություն.

● Հայրենիք և ընտանիք
● հայրենասիրություն և դավաճանություն

Խմբերին հանձնարարում է, որ կազմեն հասկացությունների էական նմանությունների տարբերությունների ցանկ

Նշում է, որ այս

Ի՞նչ է հայրենիքը:

Ի՞նչ է ընտանիքը:

Ի՞նչ եք հասկանում հայրենասիրություն ասելով:

Ի՞նչը կարող է դավաճանություն համարվել:

		րոպեների ընթացքում Ունի դերային քարտեր, բացատրում է դրանց էությունը և նշում, որ այդ դերային քարտերով կներկայացնեն վերոհիշյալ աղյուսակը և հասկացությունների աղյուսակը Ըստ այդ դերային քարտերի՝ յուրաքանչյուր խմբի Ա1, Ա2, Ա3 աշակերտներին նշանակում է ուսուցիչ, ովքեր պետք է ուսումնասիրեն հանձնանարված նյութը և այն բացատրեն իրենց խմբի անդամներին Բ1, Բ2, Բ3 աշակերտներին նշանակում է առաջնորդ, ովքեր պետք է առաջնորդեն և կառավարեն իրենց խմբերին՝	Ի՞նչ է ընտանիքը՝ ըստ Ռաֆֆու: Ի՞նչ եք հասկանում

		հավաստիանալով,տրված ժամանակահատվածում խումբն ավարտին է հասցնում բոլոր առաջադրանքները Գ1, Գ2, Գ3 աշակերտներին նշանակում է հարցատու,	

	Դերային քարտերը ստանալուց հետո սկսում են իրենց խմբային աշխատանքը Խմբի յուրաքանչյուր անդամ կատարում է իր աշխատանքը՝մի աժ ամանակ համագործակցում խմբի մնացած անդամների հետ Ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները և պատասխանում ուսուցչի վերոհիշյալ հարցերին	ովքեր խմբի անդամներին մարտահրավեր պարունակող հարցեր է տալիս կապված նյութի հետ, նպատակը խմբի ուշադրությունը էական կետերի վրա հրավիրելն է Դ1,Դ2, Դ3 աշակերտներին նշանակում է գրառող,ովքեր ամփոփում են խմբի հիմնական եզրահանգումները և ստուգում, որ խմբում բոլորը համաձայն են դրանց, իսկ հետո գրի առնում հնչած մտքերը,որը պետք է հետո ներկայացնի մնացած խմբերին Ե1, Ե2, Ե3 աշակերտներին նշանակում է ստուգող, ովքեր պետք է ստուգեն՝ համոզվելու համար, որ խմբի բոլոր անդամները հասկանում են խմբի ուսուցչի բացատրությունները, աշխատելիս	հայրենասիրություն ասելով: Ի՞նչ եք հասկանում դավաճանություն ասելով:

		անում են ճիշտ եզրահանգումներ Սովորողներին բաժանում է նկարագրված <<դերային քարտերը>> Հայտնում է, որ խմբի յուրաքանչյուր անդամի	

		կարող է հարցեր տրվեն նյութի վերաբերյա Հայտնում է ժամանակի ավարտի մասին Լսում է յուրաքանչյուր խմբի գրառածը և ընդհանրացնում դրանք Գնահատում է բոլորին	

Ավարտ- 5րոպե	Նշում և հետ են վերադարձնում թերթիկները	Ամփոփում է դասը աշակերտների օգնությամբ, հարցնում է, թե ինչ նոր բան սովորեցին այսօր: Բաժանում է	Ի՞նչ նոր բան սովորեցիք այսօր: Ի՞նչն էր ձեզ համար անհասկանալի, գրեք թերթիկների վրա:

		թերթիկներ,որի վրա աշակերտները գրում են, թե ինչն իրենց համար անհասկանալի մնաց, ինչ թերըմբռնումներ կան: Տրվում է տնային հանձնարարություն՝ <<<<Սամվել>> պատմավեպի կերպարները, Սամվելի կերպարը>>	

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝ Վ. Կարեյան

Դասապլան-2

ՈՒսուցիչ՝ Սյուզաննա Մելոյան

Առարկա՝	Հայ գրականություն	Ամսաթիվ	13.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	X
Թեմա՝	<<Սամվել>> պատմավեպի կերպարները, Սամվելի կերպարը						
Օգտագործվող նյութեր՝	10-րդ դասարանի դասագիրք, մարկերներ,պաստառ, գրիչներ, տետրեր, կպչուն թղթեր						

Դասի նպատակը՝	● վերլուծել կերպարները ● գնահատել Սամվելի կատարած քայլը ● դաստիարակել հայրենասիրություն, հայրենիքին ծառայելու ձգտում Սամվելի կերպարի միջոցով
Վերջնար դյունքները	Աշակերտը կկարողանա՝ ● թվարկել և վերլուծել կերպարները ● արժևորել Սամվելի կատարած քայլը ● գիտակցել, որ հայրենիքին ծառայելը ամենավեհ կոչումն է

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ

Մուտք-2րոպե Սկիզբ-3րոպե	Վերհիշում են նախորդ դասի թեման	Ողջունում է դասարանին Ներկա-բացակա է անում	Ո՞րն էր անցած դասի թեման: Անհասկանալի որևէ բան կա՞ դասի վերաբերյալ:
Ընթացք-30-35րոպե	Ծահագրգռված ու թյամբ սկսում են վերհիշել նախորդ դասաժամի իրենց յուրացրած նյութը և իրենց հետաքրքրասիրու թյունը լարում սպասվելիք նոր գիտելիքների ու կարողություններ ի բացահայտման ը Աշակերտներ ին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումնե	Ծանոթացնում է դասի թեմային, նպատակներին,անդրա դարձ կատարում նախորդ դասին, ներկայացնում այսօրվա դասի անելիքները Դասարանը բաժանում է 3 խմբի և տալիս հետևյալ աղյուսակը. Նմանություններ Սամվելի Երկուսն <u>ևՄուշեղի</u> <u>էլ՝</u>	

	n		

	ը Բաժանու 3խմբի

համեմ ատ ություն Սամվել ին և Աշխենի համեմ ատ ություն Սամվելի և Վահան Մամիկ ոնյ անի համեմ ատ ությունը Սամվելի և Մերու ժա ն Արծրու նո ւ համեմ ատ ությունը Սամվելի և Տաճա տու հու համեմ ատ ությունը	Երկուս էլ՝ Երկուս էլ՝ Երկուս էլ՝

	Տարբե րու թյունն եր
	Սամվելը … Մուշեղը … Սակայն Սակայն Սամվելը …Մուշ եղ ը…

	28		Գրատախտակից արտագրում են հասկացություններ ը իրենց թերթիկներին

	Տաճա տու հին… Սակայն

	Սամվե … Աշխեն … Սակա Սակա Սամվե … Աշխեն … Սամվե … Վահա Մամի ոնյ անը… Սակա Սակա … Սամվե … Վահա Մամի ոնյ անը… Սամվե … Մերու ժա ն Արծրո նի ն… Սակա Սակա Սամվե … Մերու ժա ն Արծրո նի ն… Սամվե …

Ի՞նչ է հայրենիքը: Ի՞նչ նմանություն և ի՞նչ տարբերություն կա հայրենիքի և սիրած աղջկա միջև: Ի՞նչ նմանություն և ի՞նչ տարբերություն կա հայրենիքի և ծնողի միջև:	29		Դերային

	Սակա Սամվե … Տաճա տու հին…

Գրատախտակին գրում է 2 հասկացություն

● Հայրենիք և սիրած աղջիկ
● հայրենիք և ծնող

Խմբերին հանձնարարում է, որ կազմեն հասկացուսությունների էական նմանությունների տարբերուսությունների ցանկ

Ուղղորդող հարցադրումներ է անում նյութի վերաբերյալ

Նշում է, որ այս աշխատանքը պետք է կատարեն 15-20 րոպեների ընթացքում՝նշանակվա ծ դերերի միջոցով

Դերային քարտերի միջոցով բաժանում է դերերը.

Ըստ ձեզ՝ ո՞րն է այս հատվածի ամենակարևոր ասելիքը:

Ճի՞շտ էր արդյոք Սամվելի որոշումը:

Եթե ձեր կյանքում լիներ

	քարտերը ստանալուց հետո սկսում են իրենց խմբային աշխատանքը Խմբի յուրաքանչյուր անդամ կատարում է իր աշխատանքը՝ մի աժամանակ համագործակցում խմբի մնացած անդամների հետ Լրացնում են աղյուակը Կազմում են հասկացություններ ի էական նմանությունների և տարբերություններ ի ցանկը Ուղղորդող հարցերին պատասխանելով՝ կարողանում են ժամանկի ընթացքում վերջացնել	Յուրաքանչյուր խմբում կա 2 <<ուսուցիչ>>, ովքեր ուսումնասիրում են հանձնարարված նյութը և այն բացատրում իրենց խմբի մյուս անդամներին 1 <<ստուգող>>, ով ստուգում է համոզվելու համար , որ խմբի բոլոր ան դամները հասկանում են խմբի ուսուցչի բացատրությունները,ա շխատելիս անում են ճիշտ եզրահանգումներ 1<< առաջնորդ>>,ով կառավարում է և առաջնորդում խմբին՝ հավաստիանալով, որ տրված ժամանակահատվածու մ խումբն ավարտին է հասցնում բոլոր առաջադրանքները և 1 <<բառապաշարի պատասխանատու	նման իրավիճակ,ինչպե՞ս կվարվեիք դուք: Ո՞րը կլիներ ձեր որոշումը: Ուրիշ ի՞նչ կերպ կարող էր վարվել Սամվելը: Արդյո՞ք հիմա Սամվելներ կան:

	աշխատանքը	>>, ով ուսունասիրում և բացատրում է տեքստում եղած անհասկանալի բառերի բացատրություններ ը Հայտնում է աշակերտներին, որ խմբի ցանկացած	

	Ներկայացնում են իրենց կատարած աշխատանքնե որը և պատասխանում ուսուցչի վերոհիշյալ հարցերին	անդամի կարող է նյութի վերաբերյալ հետևյալ հարցերը տրվել Հետևում է աշակերտների ընթացիկ աշխատանքին Տեղեկացնում է ժամանակի ավարտի մասին	

		Լսում և հետևում է յուրաքանչյուր խմբի աշխատանքին Կատարում է ճշտումներ և շտկումներ Գնահատում է բոլոր աշակերտներին	

		Աշակերտների օգնությամբ ամփոփում է դասը՝հիմնական շեշտը դնելով Սամվելի կերպարի միջոցով հայրենասիրության գաղափարի վրա: Բաժանում է թերթիկներ, որի վրա աշակերտները գրում են,թե ինչն իրենց համար անհասկանալի մնաց, ինչ թյուրըմբռնումներ կան Հանձնարարում է տնային աշխատանքը	

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝ Վ. Կարեյան